ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 1668-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1924-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, ինչպես նաև անհայտ կորածների ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության միջոցառումը հաստատելու մասին» N 1924-Լ որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 դեկտեմբերի 2020 թվականի N 1924-Լ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՍԿՍՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին ու 4-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում անհայտ կորածների ընտանիքներին սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշման իմաստով անհայտ կորած են համարվում 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով գտնվելու վայրն անհայտ կամ գերեվարված այն քաղաքացիական անձինք, որոնց տվյալներն առկա են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի կամ Լեռնային Ղարաբաղի մարդու իրավունքների պաշտպանի կամ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության մեջ:

3. Սույն որոշման իմաստով անհայտ կորածի կարգավիճակը հստակեցված անձ է համարվում սույն որոշման 2-րդ կետի համաձայն անհայտ կորած համարված այն քաղաքացիական անձը, որի գտնվելու վայրը դարձել է հայտնի:

4. Սահմանել, որ անհայտ կորածի կարգավիճակը հստակեցված անձի դիմելու դեպքում սույն որոշմամբ սահմանված, անհայտ կորածի համար դեռևս չնշանակված կամ չվճարված, սոցիալական աջակցությունը տրամադրվում է իրեն:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 3-ի N 1924-Լ որոշման

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՍԿՍՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում անհայտ կորածների ընտանիքներին (այսուհետ՝ շահառու):

2. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է ամսական 300.000 դրամի չափով:

3. Սույն միջոցառման շրջանակում ընտանիքի անդամներ են համարվում՝

1) ամուսինը.

2) զավակը (զավակները).

3) ծնողը (ծնողները) կամ օրինական ներկայացուցիչը.

4) 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև անհայտ կորած քաղաքացու խնամքի տակ գտնված 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը: Ընդ որում, քույրը և եղբայրը սոցիալական աջակցության իրավունքից կարող են օգտվել, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն երրորդ աստիճանի սահմանափակում:

4. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է համապատասխան գումարը բանկային հաշվեհամարին կամ շահառուի ընտրված բանկին փոխանցելու միջոցով:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 3-ի N 1924-Լ որոշման

Կ Ա Ր Գ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՍԿՍՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են շահառուի սոցիալական աջակցության (այսուհետ՝ աջակցություն) տրամադրման (նշանակելու և վճարելու) հետ կապված հարաբերությունները:

2. Աջակցությունը տրամադրում (նշանակում և վճարում) է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ շահառուի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի հիման վրա: Աջակցության տրամադրման համար դիմում կարող է ներկայացնել նաև անհայտ կորածի կարգավիճակը հստակեցված անձը:

3. Դիմումը ներկայացնելու համար շահառուն, մինչև 2023 թվականի հոկտեմբերի 10-ը, e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի կամ նախարարության պաշտոնական mlsa.am պաշտոնական կայքէջի «Գրեք նամակ» բաժնի միջոցով նախարարություն է ներկայացնում՝

1) շահառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը (կամ նույնականացման քարտի համարը), էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը, բանկային հաշվեհամարը կամ բանկը.

2) ամուսնության վկայականի կամ ամուսնության ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի էլեկտրոնային լուսապատճենը՝ անհայտ կորածի ամուսնու համար.

3) անհայտ կորածի ծննդյան վկայականի կամ ծննդյան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի էլեկտրոնային լուսապատճենը՝ անհայտ կորածի ծնողի կամ օրինական ներկայացուցչի համար.

4) երեխայի ծննդյան վկայականի կամ ծննդյան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի և առկայության դեպքում՝ երեխայի ծնողների ամուսնության վկայականի (կամ հայրության ճանաչման վկայականի) էլեկտրոնային լուսապատճենը՝ անհայտ կորածի երեխայի համար.

5) ըստ անհրաժեշտության՝ առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելը հաստատող փաստաթղթի, հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու վերաբերյալ որոշման (վարչական ակտի), ինչպես նաև 18 տարին չլրացած երեխայի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, խնամակալը, որդեգրողը, դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի խնամակալ հանդիսանալը հաստատող փաստաթղթերի էլեկտրոնային լուսապատճենները.

6) տեղեկություն այլ շահառուների (ընտանիքի անդամներ՝ ամուսին, զավակ, ծնող, քույր, եղբայր) առկայության վերաբերյալ (բացառությամբ անհայտ կորածի կարգավիճակը հստակեցված անձի դիմելու դեպքի)՝ համաձայնության դեպքում կցելով անհայտ կորածի համար նախատեսված գումարը մեկ շահառուի կողմից ստանալու մասին բոլոր շահառուների կողմից ստորագրված համաձայնագրի էլեկտրոնային լուսապատճենը:

4. Նախարարությունը, դիմումով ներկայացված տվյալները համեմատում (համադրում) է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի կամ Լեռնային Ղարաբաղի մարդու իրավունքների պաշտպանի կամ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կողմից տրամադրված տվյալների հետ, անհրաժեշտության դեպքում, համեմատում (համադրում) է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվական բազաների տվյալների հետ և մերժում է կամ հաշվառում է դիմումը: Ընդ որում, ճշգրտվում է նաև այլ շահառուների առկայության վերաբերյալ տեղեկությունը:

5. Դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տվյալները թերի են և դրա մասին նախարարությունից դիմումը ստանալուց տասն աշխատանքային օրվա ընթացքում տեղեկանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում չեն լրացվել.

2) ներկայացված տվյալները հավաստի չեն (նախարարության իրականացրած ուսումնասիրության արդյունքում).

3) դիմումը ներկայացնելու պահին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալների համաձայն՝ առկա է շահառուի մահվան պետական գրանցում: Այս դեպքում այլ շահառուի առկայության դեպքում՝ այդ շահառուն աջակցությունից օգտվելու համար դիմում է սույն կարգի 3-րդ կետով սահմանված կարգով.

4) ուսումնասիրության արդյունքում չի հաստատվել սույն որոշման N 1 հավել-վածի 3-րդ կետով սահմանված՝ ընտանիքի անդամ լինելու հանգամանքը.

5) շահառուի համար առկա է հաստատված դիմում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահառուն հանդիսանում է նաև անհայտ կորած քաղաքացիական այլ անձի ընտանիքի անդամ.

6) աջակցության տրամադրումը նաև մերժվում կամ դադարեցվում է՝ անհայտ կորած քաղաքացիական անձի մասին Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեից ստացված կարգավիճակի հստակեցման (փոփոխության) մասին տեղե-կատվության առկայության դեպքում:

6. Եթե դիմումը չի մերժվում, ապա նախարարությունը՝

1) հաշվառում է դիմումը և դիմելու օրվա ամսվանից հաշվարկում է շահառուի ամսական աջակցության չափը՝ սկսած սույն կարգը հաստատելու ամսվանից մինչև 2023 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ՝ բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետի՝

ա. 300.000 դրամ/շահառուների թիվ (գումարը բաժանվում է շահառուների միջև, եթե չկա նախատեսված գումարը մեկ շահառուի կողմից ստանալու մասին համաձայնություն),

բ. եթե առկա չէ շահառուների վերաբերյալ ճշգրտված տեղեկատվություն, ապա հաշվարկվում է ամսական աջակցության նախնական չափ՝ 100.000 դրամ:

2023 թվականի հոկտեմբերի 10-ի դրությամբ ամսական աջակցության վերջնական չափի հաշվարկումը կատարվում է համաձայն սույն ենթակետի «ա» պարբերության,

գ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի N 635-Լ որոշման հիման վրա շահառուին վճարված միանվագ աջակցության առկայության դեպքում սույն ենթակետի «ա» և «բ» պարբերություններով սահման-ված ամսական միանվագ աջակցության չափը հաշվարկվում է՝ վճարված միանվագ աջակցության չափը նվազեցնելուց հետո.

2) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեից, անհայտ կորածի վերաբերյալ դեպքը տեղի ունենալու կամ կարգավիճակի հստակեցման (անհայտ կորած համարելու հիմքերը հայտնի դառնալու կամ դադարելու) օրվա կամ ամսվա մասին, ստացված տեղեկատվության առկայության դեպքում շահառուի կամ անհայտ կորածի կարգավիճակը հստակեցված անձի ամսական աջակցության չափը հաշվարկվում է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված չափերով՝ դեպքը տեղի ունենալու ամսվանից մինչև կարգավիճակի հստակեցման ամիսը ներառյալ.

3) հաստատում է դիմումը և շահառուի տվյալները ներառում է վճարման ցուցակում:

7. Աջակցությունը նշանակելու կամ մերժելու մասին որոշումը նախարարու-թյունը կայացնում է դիմումն ստանալուց հետո առավելագույնը 30 օրվա ընթաց-քում, որի մասին գրավոր տեղեկացնում է դիմողին: Ընդ որում, աջակցությունը նշանակելու դեպքում՝ նշվում է նաև հաշվարկված աջակցության չափը:

8. Աջակցությունը վճարվում է անկանխիկ եղանակով՝ աջակցության գումարը՝ դիմումը հաստատելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիմողի բանկային հաշվեհամարին փոխանցելու կամ շահառուի՝ ընտրված բանկի մասնա-ճյուղ անձամբ կամ նոտարական կարգով լիազորված անձի ներկայանալու և վերջինիս նույնականացնելու միջոցով:

9. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել շահառուի պարտավորությունների դիմաց:

10. Սույն կարգի հիման վրա նշանակված և շահառուի մահվան պատճառով մինչև 2023 թվականի հոկտեմբերի 20-ը չվճարված գումարը վճարվում է դիմողի

ամուսնուն կամ 14 տարին լրացած երեխային, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը (դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, դիմողի մահվան վկայականը, ազգակցական կապը հաստատող փաստաթուղթը և այլն) նախարարություն են ներկայացվում մինչև 2023 թվականի հոկտեմբերի 30-ը:»:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, ինչպես նաև անհայտ կորածների ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 2082-Լ որոշումը:

3. Սահմանել, որ քաղաքացիական անձանց շրջանում անհայտ կորածների ընտանիքների այն անդամները, որոնց համար մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն առկա է ամսական աջակցության հաստատված դիմում, ներկայացնում են միայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1924-Լ որոշման N 2 հավելվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը (փաստաթղթերը):

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 27-ի N 1408-Լ որոշման 4-րդ կետով սահմանված տվյալները, առկայության դեպքում՝ եռօրյա ժամկետում թարմացնելով տվյալները:

5. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն սույն որոշմամբ նախատեսված սոցիալական աջակցության տրամադրման ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու վերաբերյալ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ